

ճամբորդութիւնը՝ պատուարներ ձեռնարկ մը, զոր հայ արքեպիսկոպոսը կատարած է որքան ի պատիւ իր անձին՝ նոյնքան ի պատիւ իրեն ծնունդ տուող հայ ազգին:

Ասիկա է, որ մասնաւորապէս շեշտել կ'ուզէինք այս գուզնաքեայ աշխատութեամբ, ցոյց տալով թէ մեր ցեղին պատկանող անհատ մը — ան ալ եկեղեցական մը — գոնէ 200 տարիներ կանխած է կիւօսմէն ժամը, Տը Պարտէզը, Տը Պուրկօնը, Շառլ Պիւսիտօնը և ուրիշ շատ մը ուղեգիրներ, ներկայացընելով Հապէշիստանը՝ ստոյգ տեղեկութիւններով և ճշդելով վայրը կենսաբան Նեղոսի ակերուն, որոնց տեղը որոշել շատ հին դարերէ ի վեր մարդկային հետաքրքրութեան առարկան եղած էր:

Վ Ե Ր Զ

